

ԿԱՐԾԻՔ

Մերգեյ Արթուրի Կտրակյանի «Երևանի կանաչ տնկարկների դենդրոֆլորայի հարստացման և գեղազարդության բարձրացման խնդիրները» թեմայով ներկայացված Գ.00.05 - «Բուսաբանություն, սնկաբանություն, էկոլոգիա» մասնագիտությամբ կենսաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար թեկնածուական ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսության թեմայի արդիականությունը

Կանաչապատումը ներկայիս քաղաքաշինության, ուրբանիզացիայի, բնակչության կենսամակարդակի բարձրացման ամենակարևոր բաղկացուցիչ է և ուղղված է կլիմայի մեղմացմանն ու ընդհանուր էկոլոգիական իրադրության բարելավմանը: Այն առանձնապես կարևոր է Երևան քաղաքի համար, որը գտնվում է չոր, կիսաանապատային գոտում և բնութագրվում է խիստ ցամաքային կլիմայով՝ շոգ ամառներով և ցուրտ ձմեռներով՝ հանդերձ, արտատարածքային, միևնույն ժամանակ փոշեկիր քամիների մուտքով, տրանսպորտային միջոցների չափազանց առատությամբ և այլն: Այդ բոլորը անբարենպաստ պայմաններ են ստեղծում բնակիչների համար:

Այս իմաստով Երևան քաղաքի կանաչ տնկարկների ստեղծման, դենդրոֆլորայի հարստացման և գեղազարդության բարձրացմանը նվիրված յուրաքանչյուր աշխատանք արժանի է լուրջ ուշադրության:

Հետևաբար կատարվող ուսումնասիրությունները խիստ հրատապ նշանակություն ունեն, ինչպես բնապահպանական, այնպես էլ բնակչության առողջության պահպանման տեսակետից և բխում են Երևան քաղաքի զարգացման ռազմավարության պահանջներից:

Ստացված արդյունքների, գիտական դրույթների և եզրակացությունների հավաստիությունը, գիտական նորույթը և հիմնավորման աստիճանը

Ատենախոսության գիտական դրույթները ձևակերպվել են ելնելով կատարված աշխատանքի նպատակից և խնդիրներից, որը հնարավորություն է տալիս կատարել Երևանի քաղաքի տարբեր տիպի և կատեգորիաների կանաչ տնկարկներում առավել հաճախ հանդիպող ծառաթփատեսակների գեղազարդության և պիտանիության գնահատում: Քաղաքի կանաչ տնկարկներում օգտագործվող տեսակների դենդրոկազմի էկոլոգիա-աշխարհագրական վերլուծության հիման վրա տրվել է դրանց հեռանկարայնության գնահատականը:

Ատենախոսական աշխատանքի գիտական նորույթը և հիմնավորվածության աստիճանը մեկնաբանված են հետևյալ դրույթներում.

- Ուսումնասիրել Երևան քաղաքի կանաչ տնկարկների ներկա վիճակը և բաշխվածությունն ըստ վարչական շրջանների բնակելի միկրոշրջանների:
- Կատարել գիտական գույքագրում մայրաքաղաքի բոլոր տիպի և կատեգորիայի կանաչ տնկարկներում՝ բացահայտելու առկա ծառերի և թփերի տաքսոնոմիական կազմը և կատարել բիոմորֆ վերլուծություն:
- Գնահատել քաղաքի կանաչ տնկարկներն ըստ գեղազարդության հատկանիշների:
- Կատարել համեմատական վերլուծություն կանաչ տնկարկներում ներմուծված և արբորիզեն ծառաբույսերի առկայության ու օգտագործման համամասնության վերաբերյալ:

- Մշակել գործնական առաջարկներ մայրաքաղաքի կանաչ տնկարկների գեղազարդության բարձրացման, ինչպես նաև առավել բարձր գեղազարդ և էկոլոգիապես ճկուն տեսակների օգտագործման վերաբերյալ:

Հեղինակի կողմից գիտական դրույթների և եզրակացությունների ճշտության հիմնավորվածությունը կասկած չի հարուցում, քանի որ դրանք հիմնականում ստացվել են քաղաքների կանաչապատման բնագավառում ընդունված ժամանակակից ճշգրիտ մեթոդիկայով և արժանահավատ են: Ատենախոսի կողմից կատարված եզրակացությունները, որոնց բովանդակությունը տրամաբանորեն բխում է ատենախոսության գիտական հետազոտության արդյունքների և ստացված գիտական նորույթի բովանդակությունից:

Գիտական եզրահանգումների գիտագործնական արժանահավատությունը հաստատվում է նաև ատենախոսի կողմից կատարված 5 գործնական առաջարկների բովանդակությամբ:

Արդյունքների նշանակությունը գիտության և արտադրության ոլորտներում

Ներկայացված ատենախոսական աշխատանքի գիտական և գործնական արժեքը բխում է հետևյալ հիմնական հիմնավորումներից: Կատարված հետազոտությունների արդյունքները, արված եզրահանգումները և առաջարկությունները կարող են հիմք հանդիսանալ Երևանի կանաչ տարածքների գեղազարդ տնկարկների ավելացման, դրանց դենդրոկազմի հարստացման ու բարելավման, ինչպես նաև գեղազարդության բարձրացման և մի շարք այլ խնդիրների լուծման համար:

Ատենախոսությունում ստացված արդյունքները կարող են լիովին կիրառվել Երևան քաղաքի բնապահպանական ծրագրերի մշակման, ինչպես նաև սոցիալ-տնտեսական զարգացման ռազմավարության հիմնադրույթների իրականացման ժամանակ:

Ատենախոսության բովանդակության և ձևավորման գնահատականը

Ատենախոսության բովանդակությունը բաղկացած է ներածությունից, 6 գլխից, եզրակացություններից, գործնական առաջարկներից և օգտագործված 93 անուն գրականության և 3 համակարգչային աղբյուրներից: Ներածությունում ներկայացված են թեմայի արդիականությունը, հետազոտության նպատակն ու նախանշվող նպատակից բխող ծրագրային խնդիրները, աշխատանքի գիտական նորույթը, տեսական և կիրառական նշանակությունը, աշխատանքի փորձահավաստիությունը (ապրոբացիան) և հրատարակումները, աշխատանքի ծավալը և կառուցվածքը:

Ատենախոսության առաջին գլխում գրականության ակնարկի տեսքով միանգամայն հավաստի տեղեկություններ են բերված Երևան քաղաքի կանաչապատման պատմության վերաբերյալ: Շարադրվում են ավելի վաղ ժամանակի տեղեկություններ Երևան քաղաքի կանաչ տնկարկների վիճակի մասին: Բերվում են տվյալներ 1957թ.-ից մինչև 1981 թ. ժամանակաշրջանում կատարված ծառագիտական գույքագրման արդյունքների վերաբերյալ, որով պարզվել է ծառերի ու թփերի այն տեսակաշարը, որը օգտագործվել է մինչև 1990-ական թվականների զանգվածային հատումները: Էներգետիկ ճգնաժամի հետևանքով (1990-1995թթ.) Երևան քաղաքում բնակիչների կողմից հատվեցին և կանաչ տնկարկների տարածքները կրճատվեցին աննախադեպ տեմպերով: Այս բոլոր տվյալները հնարավորություն են տվել հեղինակին համեմատելու Երևանի կանաչ տնկարկների վիճակը մինչև 90-ական թվականների զանգվածային հատումները և դրանից հետո:

Աշխատանքի երկրորդ գլխում ներկայացված են Երևանի դենդրոկլիմայական պայմանների բնութագիրը: Բերվում են Երևանի աշխարհագրական դիրքը, ռելիեֆի ձևերի բազմազանությունը, կլիմայական ցուցանիշները՝ մթնոլորտային տեղումների տարեկան միջին քանակը, միջին տարեկան և բացարձակ առավելագույն ու նվազագույն ջերմաստիճանային ցուցանիշները, որը վկայում է անտառաբուծման համար ծայրահեղ ծանր պայմանների մասին:

Երրորդ գլխում բերված են հետազոտության նյութը և մեթոդը: Հետազոտության նյութ է հանդիսացել Երևան քաղաքի կանաչապատման մեջ հանդիպող ծառերն ու թփերը: Որոշվել է մայրաքաղաքի կանաչ տնկարկների դենդրոֆլորայի տաքսոնոմիական կազմը, տրվել է ծառաբույսերի նկարագրությունը, ուսումնասիրվել և գնահատվել են կանաչապատման մեջ օգտագործվող ծառերի և թփերի գեղագարդության դրսևորման առանձնահատկությունները:

Աշխատանքի չորրորդ գլխում ներկայացված են Երևան քաղաքի կանաչ տնկարկների վիճակը, առկայությունն ըստ վարչական շրջանների և միկրոկլիմայական պայմանների:

Հետազոտություններով պարզվում է, որ Երևանի տարբեր վարչական շրջաններում առկա կանաչ տարածքները զգալի կրճատվել են մեկ բնակչի հաշվով: Ըստ 2017թ. գույքագրման տվյալները, քաղաքի տարբեր վարչական շրջաններում ստեղծվել են նոր տնկարկներ ու գեղագարդ օջախներ, որի արդյունքում ավելացել է ընդհանուր օգտագործման կանաչապատ տարածքը:

Աշխատանքում ներկայացված է Երևան քաղաքի կանաչապատ տարածքների բաշխվածությունն ըստ վարչական շրջանների, առկա և անհրաժեշտ կանաչ տարածքների համեմատական ցուցանիշները: Աղյուսակի տեսքով բերված է հեղինակի կողմից կատարված ուսումնասիրությունների արդյունքները Երևանի տարբեր վարչական շրջանների կենտրոնական զբոսայգիների դենդրոլոգիական բնութագրի վերաբերյալ, ինչպես նաև համառոտ նկարագրությունը վիճակի մասին:

Ատենախոսության հինգերորդ գլխում և նրա ենթաբաժիններում բերվում են Երևանի կանաչ տնկարկների բազմազանության մասին տվյալներ, օգտագործված ծառերի ու թփերի տաքսոնոմիական կազմի փոփոխության դինամիկան (1960-2018թթ.), տրվում է տարբեր տաքսոնոմիական խմբերին պատկանող և աշխարհագրական ծագում ունեցող բույսերի գեղագարդության համեմատական գնահատումը, ինչպես նաև քաղաքի կանաչապատման համար կիրառված արորիզեն և ներմուծված բույսերի օպտիմալ համակցման էկոլոգիակենսաբանական ասպեկտները:

Ատենախոսության վեցերորդ գլխում և նրա ենթաբաժիններում ներկայացված են կանաչ տնկարկների հիմնական խնդիրները, դենդրոֆլորայի հարստացման և գեղագարդության բարձրացման ուղիները: Բարձր գեղագարդ և էկոլոգիական հարմարվողականությամբ օժտված ծառերն ու թփերը Երևանի կանաչապատման համար բերվում են առանձին աղյուսակով: Բերվում են նաև կանաչապատման մեջ հազվադեպ հանդիպող և նոր առաջարկվող բարձր գեղագարդ ծառաբույսերի կենսա-էկոլոգիական առանձնահատկությունները:

Հեղինակի կողմից կատարված տեսական, փորձնական և մեթոդական լայնածավալ հետազոտությունների արդյունքները բարձր գնահատելով, այնուհանդերձ ատենախոսական աշխատանքում տեղ են գտել նաև վրիպակներ, սխալներ, որոնք բերվում են ստորև:

1. Գրականության ակնարկում (գլուխ I) բերված 2 նկարների վրա հղումը բացակայում է, իսկ 4-րդ գլխում բերվում են 12 նկարներ, 1 քարտեզ և 1 գծապատկեր, սակայն հղում է կատարվել միայն երեքի վրա (նկ. 6, 7, 8):

2. Աշխատանքում աղյուսակի տեսքով (գլուխ II, աղ. 1, էջ 18) բերվում են 2016թ.-ի Երևանի ամսական միջին ջերմաստիճանը և տեղումների քանակը և ներկայացվում նաև առանձին գծապատկերներ (գծ. 2 և 3, էջ 19, 20), այնուհետև բերվում են նույն ցուցանիշներին վերաբերող գծապատկերներ (գծ. 4 և 5, էջ 22) 2017թ.-ի տվյալներով: Ցանկալի կլիներ նշված ցուցանիշները ներկայացվել ուսումնասիրության տարիների (2016-2019թթ.-ի) միջինացված տվյալներով, մեկ գծապատկերի տեսքով:

3. Աշխատանքում (գլուխ IV, էջ 30, 31) բերվում են տվյալներ Երևանի հողերի և մթնոլորտի ծանր մետաղներով աղտոտվածության և մեկ բնակչի հաշվով ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների ընդունված ստանդարտների մասին, սակայն գրականության աղբյուրների հղումը բացակայում է:

4. Աղյուսակ 6-ում (գլուխ V, էջ 58-60) ներկայացված է Երևանի կանաչ տնկարկներում օգտագործված ծառերի և թփերի տաքսոնոմիական կազմը, որտեղ դրանց ընտանիքների անվանումը բերված է միայն լատիներեն, հայերեն անվանումները բացակայում են:

5. Աշխատանքում (գլուխ VI, աղ. 11, էջ 84-89) զետեղված է Երևանի կանաչապատման համար բարձր գեղազարդ և էկոլոգիական հարմարվողականության օժտված ծառաթփատեսակների աղյուսակում բերվում է դրանց լատիներեն անվանումը և աղյուսակից հետո ծանոթությունը, իսկ սեղմագրում (աղ. 4, էջ 17-19) դրանք բացակայում են: Ցանկալի կլիներ, որ այն նույնությամբ բերվեր նաև սեղմագրում:

6. Չնայած աշխատանքում հեղինակը օգտագործում է 93 անուն գրական աղբյուրներ, սակայն դրանք գերակշռող մասը՝ 74,4%-ը 20-րդ դարի հրատարակումն է, ցանկալի կլիներ, որ օգտագործված գրականության զգալի մասը կազմեր 21-րդ դարի հրատարակված աշխատանքները:

Նշված դիտողությունները չեն նսեմացնում կատարված աշխատանքի որակը:

Սեղմագրի համապատասխանությունը ատենախոսության հիմնական բովանդակությանը, հրատարակված գիտական աշխատանքներում ատենախոսության հիմնական դրույթների ընդգրկման ամբողջականությունը

Ատենախոսության սեղմագիրը կազմված է պահանջվող չափանիշներին համապատասխան և այն հիմնականում արտացոլում է ատենախոսության հիմնական դրույթները, գիտական նորույթը և եզրակացությունները: Ատենախոսության հիմնական դրույթների հիման վրա հրատարակված են 6 գիտական հոդվածներ, որից 3-ը միահեղինակությամբ: Բոլոր հոդվածները հրատարակված են ԲՈԿ-ի կողմից ընդունելի գիտական ակադեմիական հանդեսները: Եզրակացությունները հավաստի են, բխում են ատենախոսական աշխատանքի գիտական նորույթից և հետազոտությունների արդյունքներից:

Եզրակացություն

Ամփոփելով «Երևանի կանաչ տնկարկների դենդրոֆլորայի հարստացման և գեղազարդության բարձրացման խնդիրները» թեմայով թեկնածուական ատենախոսության վերլուծությունը հանգում են հետևյալ եզրակացության:

Գտնում եմ, որ ներկայացված ատենախոսական աշխատանքը կատարված է տեսական, գործնական և մեթոդական բարձր մակարդակով, այն հետազոտության արդյունքներով, գիտական նորույթով, եզրակացություններով և արված առաջարկություններով նպատակաուղղված է լուծելու բնապահպանական և գեղագիտական կարևոր նշանակություն ունեցող հիմնախնդիրներ մայրաքաղաք Երևանի բնակլիմայական պայմաններին համապատասխան:

Կարծում եմ, որ Սերգեյ Արթուրի Կտրակյանի թեկնածուական ատենախոսական աշխատանքը բավարարում է ՀՀ ԲՈԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակը՝ արժանի Գ.00.05 - «Բուսաբանություն, սնկաբանություն, էկոլոգիա» մասնագիտությամբ կենսաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝

Հայաստանի ազգային ագրարային համալսարանի
անտառագիտության և ագրոէկոլոգիայի ամբիոնի
դոցենտ, կենս. գիտ. թեկնածու

Կ.Շ.ՍԱՐԳՍՅԱՆ

Կ.Շ.Սարգսյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ՀԱԱՀ գիտ. քարտուղար
գյուղ. գիտ. թեկնածու, դոցենտ

Կ.Շ.ՍԱՐԳՅԱՆ



10.06.2020թ.